34-ՐԴ ՏԱՐԻ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

ԿԻՐԱԿԻ 14 ՓԵՏՐՎԱՐԻ 1954 թ. № 38 (10033)

ՕՐԳԱՆ ՀԿԿ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԴԵՊՈՒՏԱՏՆԵՐԻ ՍՈՎԵՏՆԵՐԻ

„Советакан Айастан" ОРГАН ЦК КПА И СОВЕТОВ ДЕПУТАТОВ ТРУДЯЩИХСЯ АРМЯНСКОЙ ССР.

ԳԻՆԸ 20 Կ�near.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՊԱՐՏԻԱՅԻ 17-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Այսօր Երևանում բացվում է Հայաստանի Կոմունիստական պարտիայի հերթական 17-րդ համագումարը։

Նախորդ համագումարից հետո անցած մեկ ու կես տարվա ընթացքում մեր երկրի կյանքում տեղի ունեցան պատմական մեծ նշանակություն ունեցող իրադարձություններ։ Հայաստանի պարտիական կազմակերպության ողջ գործունեությունը հաշվետու ժամանակաշրջանում ընթացել է ՍՄԿՊ 19-րդ համագումարի որոշումների կատարման նշանաբանի տակ։ Հայաստանի բանվոր դասակարգը, կոլտնտեսային գյուղացիությունը, աշխատավոր ինտելիգենցիան, պարտիական կազմակերպությունների ամենօրյա ղեկավարությամբ, ձեռք են բերել զգալի հաջողություններ ժողովրդական տնտեսության ու կուլտուրայի բոլոր բնագավառներում։

Ռեսպուբլիկայի արդյունաբերության համախառն արտադրանքի պլանը 1952 թվականին կատարվեց 100 տոկոսով։ Անցյալ տարի, 1940 թվականի համեմատությամբ, արդյունաբերության արտադրանքի թողարկումն ավելացավ մոտ երեք անգամ, իսկ 1945 թվականի համեմատությամբ՝ 3,2 անգամ։ Հաշվետու ժամանակաշրջանում շահագործման հանձնվեցին արդյունաբերական մի շարք ձեռնարկություններ։

Նվաճումներ են ձեռք բերվել գյուղատնտեսության բնագավառում։ Ընդարձակվեցին տեխնիկական կուլտուրաների ցանքատարածությունները, աճեցին կոլտնտեսությունների դրամական եկամուտներն ու անբաժանելի ֆոնդերը, ավելացավ անասունների գլխաքանակը, որոշ չափով բարձրացավ մթերատվությունը։

Սովետական պետության և Կոմունիստական պարտիայի կողմից ցուցաբերվող ամենօրյա հոգատարության շնորհիվ ռեսպուբլիկայի գյուղատնտեսությունը հագեցավ նոր առաջավոր տեխնիկայով։ Այժմ ռեսպուբլիկայում գործում են 53 մեքենա-տրակտորային և 5 մեքենա-անասնաբուծական կայաններ։ Ռեսպուբլիկայի կոլտնտեսությունների 95 տոկոսը սպասարկվում է մեքենա-տրակտորային կայանների կողմից։

Անցած մեկ ու կես տարում զգալի արդյունքների հասավ նաև մեր աշխատավոր ինտելիգենցիան։ Ռեսպուբլիկայի գիտության, գրականության և կուլտուրայի բնագավառների աշխատողները եռանդուն պայքար են մղում պարտիայի առաջադրած խնդիրների հաջող կատարման համար։

Հայաստանի Կոմունիստական պարտիայի համագումարը, նշելով ձեռք բերված հաջողությունները, միաժամանակ կբացահայտի այն սխալներն ու թերությունները, որոնք թույլ են տրվել մեր աշխատանքներում, կոնկրետ միջոցներ կմշակի պարտիական, սովետական ու տնտեսական կազմակերպությունների գործունեությունն արմատապես բարելավելու համար։

Երբեմն, դեռ շատ թերություններ կան ռեսպուբլիկայի էկոնոմիկայի և կուլտուրայի բնագավառներում։ Բավական է ասել, որ միութենական և միութենական-ռեսպուբլիկական մինիստրությունների ենթակայության ձեռնարկությունների գրեթե կեսը չի կատարում պետական առաջադրանքները։ Մի շարք ձեռնարկություններ բավարարվում են համախառն արտադրանքի պլանի կատարումով և հոգ չեն տանում ասորտիմենտի գծով տրված առաջադրանքի ապահովման մասին։

Պարտիական, սովետական և գյուղատնտեսական օրգանները դեռևս վատ են աշխատում ՍՄԿՊ Կենտրոնական Կոմիտեի Սեպտեմբերյան պլենումի պատմական որոշումների կատարման ուղղությամբ, նրանք դեռ չեն կարողանում լիով օգտագործել այն վիթխարի հնարավորությունները, որ ունի կոլտնտեսային սիստեմը։ Այդ պատճառով ռեսպուբլիկայի բազմաթիվ կոլտնտեսություններ չեն կատարում գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության, հանրային անասնաբուծության մթերատվության բարձրացման գծով տրված պետական առաջադրանքները։ Շատ կոլտնտեսություններ, նույնիսկ ամբողջ շրջաններ դեռևս տնտեսապես ետ են մնում։

Լուրջ թերություններ կան նաև գիտական հիմնարկների աշխատանքում։ Մեր գիտա-հետազոտական ինստիտուտները, տեղեկագործական հիմնարկները անբավարար են պայքարում պարտիայի 19-րդ համագումարի ոգով իրենց աշխատանքը վերակառուցելու համար։ Կյանքի պահանջներից առանձնապես ետ են մնում գյուղատնտեսական գիտության բնագավառը և հասարակական գիտությունները։ Գաղտնիք չէ, որ որոշ դիտնականներ դիսերտացիա պաշտպանելուց հետո իրենց միսխան համարում են ավարտված և այլևս ոչինչ չեն ձեռնարկում։ Մեր գիտնականները խիստ անբավարար են պայքարում դյուղատնտեսական կուլտուրաների նոր սորտեր ստեղծելու, հանրային անասունների ցեղային կազմը լավացնելու ուղղությամբ, քիչ են նպաստում առաջավորների փորձի գիտական ընդհանրացմանն ու ներդրմանը արտադրության մեջ, վատ են օժանդակում արտադրության աշխատատար պրոցեսների մեխանիզացիայի հետ կապված հրատապ հարցերի լուծմանը։

Վերջին տարիներին լուրջ աղավաղումներ թույլ տրվեցին իդեոլոգիական աշխատանքում, հատկապես հայ ժողովրդի անցյալի կուլտուրական ժառանգության գնահատման հարցերում։ Չհասկանալով, երբեմն էլ աղավաղելով անցյալի ժառանգության գնահատման լենինյան սկզբունքները, որոշ ընկերներ փորձեր էին անում կամ անվերապահորեն ընդունել, կամ վճռաբար մերժել անցյալի այս կամ այն հայ գրողի ստեղծագործությունը։ Իդեոլոգիական աշխատանքի լուրջ սխալներից մեկը պետք է համարել այն, որ «միասնական հոսանքի» արտահայտությունների դեմ պայքարելու քողի տակ մեր բազմաթիվ գիտնականներ հախուռն ձևով, առանց որևէ լուրջ հիմքի, մեղադրվեցին այդ «թեորիայինց տուրք տալու մեջ։

Այդ ադմուկն օբյեկտիվորեն շեղում էր գիտնականների ուշադրությունը նացիոնալիզմի իսկական արտահայտությունների դեմ մղվող պայքարից, խանգարում էր նրանց մերկացնելու ինչպես ազգային նիհիլիզմի, այնպես էլ ազգային սնապարծության ու սահմանափակվածության դրսևորումները որոշ ընկերների աշխատություններում ու պրակտիկ գործունեության մեջ։

Ինչո՞վ բացատրել ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության ու կուլտուրայի տարբեր բնագավառներում տեղ գտած բազմաթիվ սխալներն ու վրիպումները։ Այդ հարցին սպառիչ պատասխան տվեց Հայաստանի Կոմունիստական պարտիայի Կենտկոմի անցյալ տարվա նոյեմբերին տեղի ունեցած 8-րդ պլենումը։ Դրանց հիմնական պատճառները պետք է փնտրել Հայաստանի Կոմունիստական պարտիայի Կենտկոմի նախկին ղեկավարության գործունեության արատավոր ոճի ու մեթոդների մեջ։

Ինչպես հայտնի է, պլենումը հանեց աշխատանքից ՀԿՊ Կենտկոմի առաջին քարտուղար Գ. Արուտինովին։ Աշխատանքից ազատվեցին նաև Կենտկոմի մյուս քարտուղարները։

Պլենումի մասնակիցներն իրենց գոհունակությունը հայտնեցին Սովետական Միության Կոմունիստական պարտիայի Կենտկոմին, որը օգնեց Հայաստանի պարտիական կազմակերպություններին ժամանակին բացահայտելու ժողովրդական տնտեսության ու կուլտուրայի ղեկավարման հարցերում ՀԿՊ Կենտկոմի նախկին ղեկավարության թույլ տված սխալները։

ՀԿՊ Կենտկոմի նախկին ղեկավարությունը կտրվել էր պարտիական ու անպարտիական մասսաներից, ազատական արհամարհանք էր ցուցաբերում նրանց պահանջների ու առաջարկությունների նկատմամբ։ Գ. Արուտինովը երկար տարիներ շարունակ խախտում էր ներպարտիական դեմոկրատիայի սկզբունքները, ժողովրդական տնտեսության ու կուլտուրայի զարգացմանը վերաբերող հարցերը լուծում էր միանձնարար, առանց մյուսների կարծիքները հաշվի առնելու, և այդ պատճառով ընդունված որոշումները երբեմն կամ խիստ մակերեսային էին լինում, կամ պարզապես սխալ։ Նա ղեկավար կադրերը անգամ բաշխելիս ելնում էր անձնական հավատարմության սկզբունքից։ Պատահական չէ, որ հաճախ բարձր պատերում առաջ էին քաշվում մարդիկ, որոնք չունեին անհրաժեշտ գործարար հատկություններ, չէին վայելում պարտիական մասսաների համակրանքը։ Գ. Արուտինովը ռեսպուբլիկայի ղեկավարների, հատկապես իր հացկին ուղղված առողջ քննադատության մեջ հաճախ ճշնամանք էր տեսնում և հաշիվ մաքրում քննադատողների հետ։ Քննադատության նկատմամբ ցուցաբերած այդ ոչ պարտիական վերաբերմունքի պայմաններում ժողովրդական տնտեսության ու կուլտուրայի ղեկավարման մեջ թույլ էին տրվում լուրջ աղավաղումներ և սխալներ։ Կադրերը չէին դաստիարակվում սխալների ու թերությունների նկատմամբ անհաշտության ոգով, այլ պահանջվում էր նրանցից շատ ու շատ գովք։ Խրախուսվում էին շողոքորթությունը, ծնկներն ու երկերեսանիությունը։

ՀԿՊ Կենտկոմի նախկին ղեկավարությունը լուրջ պայքար չէր կազմակերպում իդեոլոգիական բնագավառում թույլ տրված աղավաղումների, հատկապես նացիոնալիստական բուրժուական սխալների դեմ։ Կենտկոմի ղեկավարները ազմկում էին միջազգային իմպերիալիզմի գործակալների՝ դաշնակների իդեոլոգիայի դեմ պայքարի անհրաժեշտության մասին, բայց քիչ բան էին անում իրենց մտադրությունները իրականացնելու ուղղությամբ։ Այլապես ինչո՞վ բացատրել, որ ՀԿՊ Կենտկոմի տարբեր ժամանակներում կայացրած բազմաթիվ որոշումներից հետո էլ հրապարակի վրա չկա շատ թե քիչ լուրջ մի գիտական գործ, որը ինչպես հարկն է, մերկացներ դաշնակ վարձկանների նողկալի կերպարանքը։

ՍՄԿՊ Կենտկոմի Հուլիսյան պլենումի որոշման լույսի տակ Հայաստանի պարտիական կազմակերպություններում ծավալվեց համարձակ քննադատություն։ Սակայն Կենտկոմի նախկին ղեկավարությունը չդտնվեց անհրաժեշտ բարձրության վրա, այդ քննադատությունը գլխավորելու փոխարեն, գնաց նրա պոչից։ Ավելին, Կենտկոմի քարտուղարները իրենց ոչ ճիշտ վարքագծով փորձում էին խանգարել պարտիական մասսաների ակտիվության անխափան բարձրացմանը։

Անհրաժեշտ է այստեղ նաև լայնորեն ծավալել ինքնաքննադատությունը և հատկապես ներքևից եկող քննադատությունը, գլխավորել և ճիշտ ուղղություն տալ քննադատությունը, վճռականապես պայքարել քննադատության ճնշման ամեն մի փորձի դեմ, կադրերին դաստիարակել սկզբունքայնության և թերությունների նկատմամբ անհաշտության ոգով, սովետական հայրենասիրության, ինտերնացիոնալիզմի և ժողովուրդների բարեկամության ոգով։

ՀԿՊ Կենտկոմի 8-րդ պլենումից հետո պարտիական կազմակերպությունները լուրջ աշխատանք են կատարում թույլ տրված սխալներն ու թերությունները վերացնելու, ժողովրդական տնտեսության ու կուլտուրայի բոլոր բնագավառների աշխատանքը պահանջվող մակարդակի վրա բարձրացնելու համար։ ՀԿՊ Կենտրոնական Կոմիտեն մի շարք կոնկրետ միջոցառումներ է ձեռնարկել ՍՄԿՊ Կենտկոմի Սեպտեմբերյան պլենումի, կառավարության և պարտիայի վերջին որոշումների անթերի կատարման ուղղությամբ. գործնական քայլեր են արված մի շարք գյուղական շրջկոմների ապարատներն ուժեղացնելու համար։ Գյուղ են ուղարկված բազմաթիվ մասնագետներ։ Կոնկրետ քայլեր են արվում ռեսպուբլիկայի պարտիական, սովետական ու տնտեսական օրգանները ընդունակ և գործիմաց ղեկավար կադրերով կոմպլեկտավորելու ուղղությամբ։ Սակայն այն, ինչ արված է ՀԿՊ Կենտկոմի 8-րդ պլենումից հետո, միայն գործի սկիզբն է։

Հայաստանի պարտիական կազմակերպությունների առաջ, ռեսպուբլիկայի բոլոր աշխատավորների առաջ մեծ ու պատասխանատու խնդիրներ են կանգնած։ Այդ խնդիրները կարելի է լուծել միայն համառ ու քրտնաջան աշխատանքով։

Հայաստանի Կոմունիստական պարտիայի 17-րդ համագումարի աշխատանքն սկսվում է ՍՍՌՄ Գերագույն Սովետի ընտրությունների նախօրյակին։ Կասկած չկա, որ Հայաստանի աշխատավորները, մեր մեծ Հայրենիքի բոլոր աշխատավորների հետ միասին, ընտրությունների օրը, մարտի 14-ին, միահամուռ ձայն կտան ժողովրդի լավագույն զավակների, կոմունիստների և անպարտիականների ժողովրդական բլոկի թեկնածուների օգտին։

Հայաստանի կոմունիստներն իրենց հերթական համագումարն են հիել կուռ շարքերով, սերտորեն համախմբված մեր մեծ պարտիայի և նրա մարտական շտաբի՝ Կենտրոնական Կոմիտեի շուրջը։ Հայ ժողովուրդը, սովետական ժողովուրդների համերաշխ ընտանիքում, ուսա մեծ ժողովրդի ամենօրյա օգնությամբ, Կոմունիստական պարտիայի անպարտելի դրոշի ներքո բնթանում է դեպի նոր հաղթանակներ, դեպի կոմունիզմ։

★